ԵՎՍ ՄԻ ԼՈՒՍԱՏՈՒ ՓԱՌՈՆ

Մեր առաջին Հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչից մինչև նորոգ հանգուցյալ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, 130 Կաթողիկոսներ, որպես աստղաբույլ շողշողում են Հայոց երկնակամարում՝ յուրաքանչյուրն իր փայլատակման ուժգնությամբ:

Եկել է ժամանակը, երբ այդ աստղաբույլին պետք է ավելանա ևս մեկը: Ցանկանք և հայցենք առ Ամենակարողն Աստված, որ այդ աստղը լիովին արժանի լինի դասվելու իր նախորդների շարքը:

Եկել է ժամանակը, երբ Հայոց խոնարհված դրոշները պետք է փողփողան հպարտորեն:

Եկել է ժամանակը, երբ մեր ժողովուրդը պետք է ունենա իր նոր և արժանավոր Հոգևոր Հովիվը:

Եկել է ժամանակը, երբ մեր իրականությունը՝ Հայոց Աշխարհը, վերջապես պետք է ապրի իր գոյությունը լիարյուն կյանքով:

Այս օրերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը արտակարգ եռուզեռի մեջ է:

Կաթողիկոսական ընտրություններ, գահակալություն...

Այս առթիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը աշխույժ, մտախոհ և արտակարգ անակնկալներով լի տրամադրություններ է ապրում:

Ո՞վ կնստի Լուսավորչի պատմական ու հավերժական գահին:

Միայն աստվածաշնորհ արժանավորը: Միայն նա, ով իր անձը, իր էությունը անմնացորդ կնվիրաբերի՝ մեր ժողովրդին սպասվող մակընթացություններով և տեղատվություններով լի գոյության պայքարին, մեր ժողովրդի բարօրությանը և մեր ժողովրդի գոյության հավերժությանը:

Կաթողիկոսական նախորդ ընտրությունները տեղի էին ունեցել ուղիղ չորս տասնամյակ առաջ: Այն ժամանակ Լուսավորչի գահին բազմեց արժանավորներից արժանավորը՝ երջանկահիշատակ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որը բոլորանվեր էությամբ նպաստեց հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու ծաղկմանը, զարգացմանը և բարգավաճմանը:

Կաթողիկոսը է՛ և մնո՛ւմ է ընդմիշտ մեր ժողովրդի համար յուրօրինակ մի սրբություն: Իսկ Վազգեն Ա. Կաթողիկոսը ապրեց ու փայլատակեց ինչպես ասուպ և իր լայնահուն լուսատու ուղեծիրը հավերժ թողեց համայն հայությանը:

Վերջապես, չորս տասնամյակներ հետո, սույն թվականի ապրիլի 4-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և համայն հայության սգո շրջանից հետո, երբ խոնարհված էին մեր դրոշները, կրկին իր լիարյուն կյանքի հունի մեջ մտավ համայն հայությունը, և նորից հպարտորեն փողփողացին Ս. Էջմիածնի և ողջ հայ ժողովրդի դրոշները: Այդ օրը Ամենայն Հայոց Կաթողիկոս հռչակվեց և Ս. Էջմիածնի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի պատմական գահին բազմեց Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը՝ վերակոչվելով **Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց:** Կրկին Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ունեցավ իր արժանավորագույն Հոգևոր Հովիվը՝ օժտված հարուստ առաքինություններով և բազմապորձ ու լավագույն արժանիքներով:

Բուռն կրքերից առաջացած փոթորիկը հանդարտվեց և խաղաղվեց:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայոց Աշխարհի երկնակամարն իր մռայլ, հոգեխռով ամպամածությունից զտվեց և վերածվեց վառ հույսերով և հուսալի սպասելիքներով լի կապույտ, ջինջ մի անծայրածիր հորիզոնի: Կիլիկյան պատմական Հայաստանի Կաթողիկոսական Աթոռի փայլատակող մի աստղ եկավ վերջապես միանալու և միաձուլվելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արեգակնափայլ աստղին՝ միատեղ և մեկընդմիշտ լուսատու փարոս ու անշեղ ուղեցույց հանդիսանալու՝ դեպի մեր Տեր Հիսուս Քրիստոս տանող իղձերի երանելի մեր ուղու:

«Մենք պետք է ձեռք-ձեռքի տված մեր գլուխները մատաղ անենք մեր ժողովրդին». ընտրություններից անմիջապես հետո Ս. Էջմիածնի Գահասրահում Հայաստանի Հանրապետության մեծահարգ նախագահի արտաբուխ այս խոսքերը, ուղղված Գարեգին Ա Կաթողիկոսին, ուժգին տպավորություն թողեցին ներկաների և համայն հայության վրա: Իսկ նորընտիր Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը չուշացրեց այդ խոսքերի իրագործումը, եկավ ապացուցելու, որ դրանք ոչ թե խոսքեր էին, այլ բխած ներքին անդիմադրելի մղումից: Վեհափառ Հայրապետն իր շքախմբով պաշտոնական այցելություններ տվեց իշխանություններին, նրանց՝ դեպի Ս. Էջմիածինն ունեցած անկեղծ և նվիրումով լի վերաբերմունքի համար, եղավ ժողովրդի մեջ՝ հայ հոգևոր կենտրոն Վաղարշապատում և քաղաքամայր Երևանի տարբեր շրջաններում: Ամենուրեք շփումները ջերմ էին և անմիջական: Ամենուրեք Հայոց Հայրապետը սերմանում էր **Հավատ, Հույս** և **Սեր:**

Համայն հայության համար իրոք երանելի օրեր են, ամենուրեք երգ, երաժշտություն, ցնծություն... Վստահաբար պետք է ասել, որ Հայ Եկեղեցու և համայն հայության համար մեծ հույսերի և սպասումների ժամանակներ են սպասվում:

Ապրիլի 9-ին, Ծաղկազարդի տոնի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում, բազմահազար հավատացյալների ներկայության, Ամենայն Հայոց Կաթողիկոսական իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց և արտագին ու անկեղծ քարոզ խոսեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը՝ իր խոսքը համեմելով բարեպաշտ քրիստոնյային վայել իմաստալից խուստումներով և պատգամներով:

Տպավորիչ էր և չափազանց հուզիչ պատարագի միջնամասը, երբ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծունկի եկավ և իր ուխտի խոսքը ասաց, երբ երկու բարձրաստիճան իշխանավոր հոգևորականներ նրան հանձնեցին կաթողիկոսական գավազան և մատանի՝ ի նշան կաթողիկոսական իշխանության, երբ տասներկու եպիսկոպոսներ, ի հաստատումն այս ամենի, մոտեցան և իրենց աջը դրեցին նրա գլխին: Տասներկու եպիսկոպոսների ներկայությունը խորհրդանշումն էր Քրիստոսի տասներկու աշակերտ-առաքյալների: Թվում էր, այո, թե Ամենայն Հայոց Հայրապետը ծունկի է եկել Աստուծո առջև, իր ժողովրդի առջև՝ հայցելու նրանց թողտվությունը՝ բոլորանվեր էությամբ շարունակելու իր նախորդների անավարտ թողած մարդասիրական և ազգանվեր գործունեությունը: Հենց այդ պահին կարծես Երկնային տասներկու լուսափայլ հրեշտակներ, տասներկու եպիսկոպոսների տեսքով, իջել են Ավագ սուրբ սեղան և Աստուծո շնորհներն են բաշխում նորընտիր Հայոց Հայրապետին:

«Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս: Եւ եղեւ լոյս»:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ